



169. ՊԱՌԱՎԻ ԲԱՂԸ

Ըլնալ ա լլնալ մին շենըմ մին հենգյ-վեց խոխատար մարթ ա
ըլալ, էս խեղճ մարթին կնեգլը՝ Հերթքնաղը, մեռնըմ ա։ էս գլու-
ղացի մարթը օխնը, քոասունքը տամ ա պրծնում, քլննում հըրանց
շենին դերին կոշտը.—Օրթնի ադեր,—ասըմ ա, ծեռքը պաշըմ և
ադնըր հրավերավը նստում։ Դերը հըցնում ա.—Խեր ինի՞, ա՛
Քլանսպար, բնլի մին դանդ օնիա։ Քլանսպարը ասըմ ա.—Ա՛դեր,
տու գլնդում ըս, վեր Հերթքնաղը ումբուրը քեզ բաշխից, և ես
մհենգյ օզում ըմ իմ քենի Գլնկխասը պիրիմ խոխեքլը յուա տանի։
Դերը ասըմ ա.—Ա՛յ Քլանսպար, քենեն օզիլ շեն, համ մեխկ ա,
համ էլ ջհառա փիս կինի, տոնտ-տեղտ խարաբա կմնա։ էս ճարը
կտրած Քլանսպարը ասըմ ա.—Ա՛դեր, պաակըմը մին լնվ բազ
օնիմ, ընել կտամ, մին մարալ ճորե օնիմ, ընել կտամ, մին թնհ-
րը ըրա գործս դնլդնըցրու։

Դերը բաղն ու ճորեն ըսկանըմ ա թա չէ, կնգանը ասըմ ա.—
Կնփոն ախճիգյ, մին իփրեմվերդին ինձ տոք։ Կնեգլը Նփրեմ-
վերդին տամ ա դերին, և դերը կլիրը պեց ա անըմ, ըսկսում կնր-
թիլը։

—Պաակեն բաղը,

Մարալ ճորեն,

Մեռնե կինը,

Առնե քենե՛ն։

Քլնի տու Քլանսպար վերթի, հալալ ինի։